15

1. Թող ուրախ լինեն սրտերը մեր
Եվ գոհությունով լցված:
Հայրը կոչում է մեզ՝ որդիներ,
Իր Որդով ենք մենք փրկված:

Մենք ուրախ ենք (2)
Եվ ամեն օր ենք ուրախ,
Կյանքի ճանապարհը գեղեցիկ է,
Ուրեմն լինենք միշտ ուրախ:

2. Հայրն Իր ձեռքով տանում է մեզ,
Պատերազմում՝ պաշտպանում:
Նրա շնորհքը տալիս է մեզ
Ինչ որ պետք է մեր կյանքում:

3. Երբ Նրանից հեռանում ենք,
Խավարում է մեր շուրջը,
Այս ու այն կողմ տատանվում ենք,
Եվ տրտմում է մեր անձը:

4. Բայց «արդարները կծաղկեն»,
Չեն շեղվի ճանապարհից,
Թող Տիրոջը միշտ ծառայեն
Եվ հեռու մնան մեղքից: